ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

20 հունիսի 2023թ. **N 14-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՈՒՄԲ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ԽՄԲԻ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԱՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու նպատակով նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ գրանցելու վերաբերյալ 12.06.2023թ.-ին ստացված Արամ Ռազմիկի Պետրոսյանի և 65 քաղաքացիների կողմից ստորագրված որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

Քաղաքացի Արամ Ռազմիկի Պետրոսյանը 2023 թվականի հունիսի 12-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացրել քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու նպատակով նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ գրանցելու վերաբերյալ որոշում:

Որոշմանը կից ներկայացված են որոշումը ստորագրած բոլոր 66 քաղաքացիների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծը և հիմնավորում՝ էլեկտրոնային և թղթային տարբերակով, ինչպես նաև նախաձեռնող խմբի էլեկտրոնային հասցեն:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է. «Ընտրական իրավունք ունեցող առնվազն հիսուն հազար քաղաքացի ունի Ազգային ժողովին քաղաքացիական նախաձեռնության կարգով օրենքի նախագիծ առաջարկելու իրավունք:»:

«Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Քաղաքացիական նախաձեռնության կարգով Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու կամ հանրաքվեի միջոցով ընդունված օրենքում

փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու համար կազմավորվում է առնվազն 25 քաղաքացուց բաղկացած նախաձեռնող խումբ:»:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

«Նախաձեռնող խումբը գրանցման համար Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում նախաձեռնող խմբի բոլոր անդամների կողմից ստորագրված՝ նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ որոշումը, որում առկա ստորագրությունները վավերացվում են նոտարական կարգով, նախաձեռնող խմբի անդամների անձը հաստատող փաստաթղթի պատճենները, համապատասխան օրենքի նախագիծը՝ էլեկտրոնային և թղթային տարբերակով, և նախաձեռնող խմբի էլեկտրոնային փոստի հասցեն, որը նախաձեռնող խմբի գրանցումից հետո հրապարակվում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Նախաձեռնող խումբ կազմավորելու և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ նշանակելու վերաբերյալ որոշման ձևը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»:

Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված են «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով պահանջվող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, որոշումն ստորագրած քաղաքացիական նախաձեռնության բոլոր 66 անդամների ստորագրությունները վավերացված են նոտարական կարգով: «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տասն աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է նախաձեռնող խմբին և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչին կամ մերժում է գրանցումը, եթե սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված պահանջները պահպանված չեն: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից և մինչև հաջորդ օրվա ավարտը տեղադրվում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:»:

Նույն հոդվածի 19-րդ մասի համաձայն՝ ստորագրությունների հավաքումն իրականացվում է նախաձեռնող խմբի գրանցումից հետո՝ 60 օրվա ընթացքում:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի 1-ին, 4-րդ, 5-րդ և 19-րդ մասերի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Գրանցել Ազգային ժողովին «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի

նախագիծ առաջարկելու նպատակով կազմավորված նախաձեռնող խումբը և նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցիչ գրանցել Արամ Ռազմիկի Պետրոսյանին:

2. Ազգային ժողովին օրենքի նախագիծ առաջարկելու նպատակով ստորագրությունների հավաքման համար 60-օրյա ժամկետ սահմանել 2023 թվականի հունիսի 21-ից մինչև 2023 թվականի օգոստոսի 19-ը ներառյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ.Հովակիմյան**